

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԷԼԻՋԷ ՌԵՎԼԻԻ: Ռուսական Հայաստան կամ Արաքսի աւազանը, Ուրմիա լիճ և Առաջաւոր Ասիա: Թարգմանեց Միսրան: Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ կաթ. Էջմիածնի, 1891 թ. փոքրագիր 166 երես, տառ № 12, գինն է 30 կոպ.:

Էլիզէ—Ռեկլիւլի աշխարհագրութիւնը իւր մեծ ծաւալով, իւր բազմակողմանի և մանրամասն տեղեկութիւններով, մի նշանաւոր գանձ է աշխարհագրական մասնագրութեան համար: Խօսելով մի երկրի մասին՝ Ռեկլիւն նկարագրում է երկրի անդագրութիւնը, նորա պատմական անցեալը, նորա ժողովրդի կեցութիւնը, նորա ազատած կրօնը, նորա քաղաքական դիրքը, նորա գրականութիւնը, նորա տնտեսական վիճակը, պարսպմունքները, մի խօսքով տալիս է մի երկրի մասին ճիշդ գաղափար կազմելու համար ըստ կարելուց մանրամասն նիւթ: Հումբօլդի, Ռիտտերի, Ռեկլիւլի նման աշխարհագիրները իրանց աշխատութիւններով չնեղում են աշխարհագրութիւնը մի շատ բովանդակալի և հետաքրքրական առարկա, արժանի գիտնականի խոր ուշադրութեան և ուսանելի լուրջ ընթերցողի համար:

Էլիզէ Ռեկլիւլի քաղմահատոր

աշխարհագրութեան մէջ դետեղած են հետաքրքրական գլուխներ և Անդրկովկասի, Փոքր-Ասիայի ու Պարսկաստանի մասին:

«Միաբանը» (ծածկանուն) մի լաւ միտք է զղացել ծանօթացնելու մեր հասարակութիւնը Ռեկլիւլի աշխարհագրութեան ալս վերջին մասերի հետ և արդէն թարգմանել է հետեւեւ գլուխները՝

«Ռուսական Հայաստան կամ Արաքսի աւազանը», «Ուրմիա լիճ», «Առաջաւոր Ասիա», «Լադիստան, Հայաստան և Գիւրդիստան, կամ մի խօսքով Տաճկա-Հայաստան», «Փոքր-Ասիայի, Ասորիքի, Պաղեստինի և Միջագետքի բնակիչներն ու կրօնները»:

Միաբանը մտադիր է, եթէ հոնգամանքները քող տան, աւելացնել սորանց և «Լուրի աւազանը», ճորսի, Իհօնի և Լիդուրի աւազանները», «Կաղստան» և «Պարսկաստանի բնակիչներն ու կրօնները»:

Ներկայ գրքովկում, ինչպէս տեսնում է մեր ընթերցողը, ամփոփւած են վերև փշած երեք գլուխները միայն, Մեղ համար ամենահետաքրքրականն է, ի հարկէ, առաջին գլուխը, որի վերայ և կանգ կառնենք:

Միաբանը իւր կողմից դրել է մի քանի ծանօթութիւններ բնադրի զանազան կէտերի վերաբերմամբ, որոնց մեծ մասը սակայն անունների բացատրութեանն է նւիրւած:

Ծանօթութիւնները կարգացում են հետաքրքրութեամբ, բայց նոցա քանակութիւնը քիչ է և թարգմանիչը կարծես կամաւ խուսափել է նոցա շատութիւնից: Մենք կարծում ենք, որ թերի կամ սխալ կէտերի մասին. ծանօթութիւններ շատ հարկաւոր են. Միայն լաւ կը լինէր նոցա ղետեղել օգուածների վերջում և ոչ տողերի տակ, որովհետև գրքովկի դիրքը փոքր է, իսկ ծանօթութիւններից մի քանիսը կարող են շատ մեծ լինել և մի քանի երես տեղ պահանջել, որ մեծ անլարմարութիւն է ընթերցողի համար:

Առաջին գլխում հեղինակը նկարագրում է Արաքսի աւազանը, նորահոսանքի վերին մասերից, ակններից, մինչև վերջը: Այդ հոսանքի ընթացքում նա կանգ է առնում արև բոլոր տեղերի վերայ, որոնք մի որ և է պատճառով նշանաւոր են: Այդպէս են կողբի աղահանքը, Արարատը, Արագածը, Արկուռու քանդակը, Սևանալ լիճը, Նրեանը, Էջմիածինը, Նախիջևանը, ալդ տեղերում ապրող Ժողովուրդները, Աւելորդ չենք համարում անել մի քանի քաղ. ամբքներ:

Կողբի աղահանքը, Վինաստանից զուրս, թերևս ամենահին, բազմա-

թիւ դարեր շահագործւած բրածոն է: Նա աշխարհիս ամենամեծ աղաքարի զանգւածներից մէկն է: Ինքը աղաքեր լսառը կազմւած է բազմաբանգ շերտերից: Աղալին ամենաբարձր և ամենաստորին շերտերը դեռ չեն արգիւնագործւած: Քարահտները բանում են միայն միջին շերտում, որի հաստութիւնը 30—64 մետր (խանի գաղի չափ) է: Միջին արգիւնաբերութիւնը 40 տարւալ ընթացքում, 1836 ից լետու, 4000-ից բարձրացել է 16,300 տակառաչափի:

Արարատ սարը, Հալաստանի բարձրաւանդակի պատմական ալդ կենտրոնը, լալանի է և Մասիս անունաւ, Առաջին անունը հաւանականաբար արամէական ծագումից է, իսկ վերջինը բուն հայկական է: Արարատի լեռնալին բուսականութիւնը նոյնն է, ինչ և ալպիանը. բայց տեսակների թւով նա չէ հասնում ալպիանին: Մասիսը չը նալած իւր ձների ահաղին քանակութեանը, որ ծանրանում են նորա գագաթին, գրեթէ բոլորովին անջուր է, Հաւանական է, որ ձիւնի և անձրևի ջրերը կորչում են գետնի ճեղքւածներում և լճանում ստորերկրեալ խողովներում:

Արագածից նոյնպէս կորչում են ջրեր, որոնցից պաշար է ստանում սարից հարաւ գտնուող մի լիճ, Աղլըր Գեօլը, որը ծնունդ է տալիս Սև ջրիակունքներին (որ թափւում է Արաքսը):

Սեանալ լիճը երկու ու կէս անգամ աւելի մեծ է, քան Ժեմեովի լիճը: Խորութիւնը միջին թւով հասնում է 45—75 մետրի (գաղի): Լճի ջուրը քաղցր է: Ձկները բալմաստիսակ չեն:

բայց առաւ ևն քանակութեամբ: Լճի հիւսիս-արևմտեան անկիւնում՝ մի կղզեակի վերայ շինւած է Սեանի վանքը, որ ինն դար շարունակ հռչակուած է Հայաստանում:

Արաքսի հովտում չափազանց նեղում են մարդուն եղանակի ծալահեղութիւնները: Մինչդեռ ձմեռը Լիբանի մօտերքը ցուրտը հասնում է մինչև 30—35 աստիճանի զրօյից ներքև (միջին թուղլունւարին—15°), ամառը շոգերը անցնում են +10 աստիճանից: Բարեբաղդաբար շոգերի ժամանակ ալտուզ փչում է երեկոները մի քամի, որ զալիս է սարերից:

Այս հովտում բնակուող զլխաւոր աղզը հալերն են: Ամբողջ աղզը, որ սովորաբար երեք, իսկ մի քանի հեղինակներից չորս միլլիօն է համարւած, հաւանականօրէն պէտք է, որ երկու միլլիօնից աւելի չը լինի:

Բոլոր քերականները հալոց լեզուն դասում են արիական ընտանիքում: Բառերի և քերականական ձևերի հարստութեամբ հալ լեզուն հաւասար է լուսականին, ունենալով կաղմութեան նոյն ճկութիւնը և բարդ բառեր ստեղծելու անսահման կարողութիւն:

Վանի երկրում ժառերը ծածկւած են հալկական բնեղադրերով: Մինչև չորրորդ դարը հալկական լիշատակարանները գրւում էին չոյն և պարսիկ գրերով: Սկսած Դ դարից, երբ 300 դպրոց էր բացւած հալ պատանիների համար և զրականութիւնը սկսել էր ծաղկել, հալերէնը ունեցաւ սեպական ալուբէն, որ մինչև օրս էլ գործածութեան մէջ է: Տասնևչորսերորդ դարում Լանկթամուրի

արշաւանքը լանկարծակի վերջ դրեց Հայաստանի դասական զրականութեան:

Ներկայումս հալերը քանք են գործ գնում իրանց որդիներին ուսման առաւելութիւնները մատակարարելու և չը կալ հասարակութիւն (?), որ զպրոց չ'ունենալ և չը պահէ (?): Գլխական և զրական շարժումը շատ զօրեղացել է հալերի մէջ: Գրականութիւնը սկսում է դարպացնել իւր բոլոր ճիւղերը և հարստանում է օտար նշանաւոր գրքերի թարգմանութեամբ: Հալ լրագիրներ հրատարակւում են Պոլսում, Թիֆլիսում և ուրիշ քաղաքներում:

Հալերը մեծ մասամբ ունին սե, խոշոր և տարփալի աչքեր, երևում են միշտ քաղցրաբարոյ, զրեթէ մեղամաղձոտ: Ի բնէ թէև հանդարտ, բայց քաջութեամբ լեւտ են մղում իրանց վերայ լարձակողներին, ինչպէս ալլ ապացուցին 18-րորդ դարի սկզբում եօթնամեալ պատուազմի ժամանակ, անկախութեան համար, որ մղեցին նոքա ընդդէմ պարսիկների՝ Վարաբաղի լեռներում և ալնուհետև բաղմաթիւ տեղակսն ապստամբութիւնների ժամանակ ընդդէմ թուրքերի:

Վրացի և թուրք զիւղերում ու քաղաքներում նոքա նոյնչափ հարկաւոր են, բայց և նոյնչափ ատւած ու արհամարհւած, որչափ հրէաները արևելեան Եւրոպայում: Այնու ամենայնիւ, առանց մեծ չափազանցութեան կարելի է հալ գիւղացուն վերագրել Տուրնեֆօրի առածը. «Հալերը աշխարհի ամենալաւ և ամենաաղնիւ ժողովուրդն են»:

Թողնելով ընթերցողին կարդալու մանրամասնութիւնները և ծանօթանալու միւս գրութիւնների հետ, մենք մեր կողմից օգտուում ենք դէպքից նշանակելու ակտիւ մի քանի կէտերի վերաբերմամբ կարճ նկատողութիւններ:

Արագածի անւան մասին Ռեկլիւն ասում է հետեւեալը.

«Ալլահ-գեօղը (Աստուծոյ աչքը), կամ աւելի ճիշդ՝ Ալա-գեօղը, որ է «խալտաբղէտ լեռան» — թէ սակայն այս բառը հաւկական Արագածի թըրքական ձևը չը լինի — Մասիսի դէմադէմն է»:

Թարգմանիչը համարում է ուղիղ վերջին մեկնութիւնը, որովհետեւ «բնիկներից կոչւում է ոչ թէ Ալա-գեօղ, այլ Ալա-գեաղ: Ալա թըքական բառը զործ է դրւում հայերէն ծաղկեալ, ծաղկանց բառերի տեղ»:

Ալագեօղ, կամ Ալլահգեօղ անունը, որ մտել է աշխարհադրութիւնների մէջ և նշանակւած է քարտէշներում բոլորովին սխալ է: Բնիկները լիրաւի անւանում են Ալագեաղ, որ հաւանական է թէ ծաղած լինի Արագած բառից. բայց ինքը Ալագեաղ, անունն էլ ունի իւր նշանակութիւնը, որ համապատասխանում է Արագածի ձևին և տեսքին: Ինչպէս լատինի է՝ Արագածի գագաթը միապաղաղ չէ, այլ բաժանւած է մի քանի մաս: Այդ ճեղքաժող լատինի է հաշա անունով: Գեաղ բառը նորմանիչ է հաշալին: Եւ որովհետեւ ձիւնը Արագածի զլիւին երևում է հեռից ոչ անընդհատ ծածկոյթով, այլ տեղ տեղ, պիտակաւոր, ուստի հասկանալի է, որ Ալագեաղ կամ «խալտաբղէտ ճեղք»

անունը կարող էր լարմարեւել ալդ սարին: Իբրև նորնպիսի օրինակ՝ կարող ենք առաջ բերել, Տաթևի մօտ եղած Գեաղըն լեռան, որ համապատասխան իւր անւան ունի ճեղքաժող, որի միջով և կատարւում է հաղորդակցութիւնը:

Ռեկլիւն ջրի սակաւութեան կողմից համեմատում է Արագածը Արարատի հետ, ձիւղ է Արագածը մինչև տափարակը քիչ ջրեր է հասցնում, բայց նա շատ էլ աղքատ չէ ջրի կողմից, Նա տալիս է Դալիչալ, Ամբերդ, Կօրանգու (Մանթաշաճորում) և ուրիշ մանր գետակներ, որոնցից օգտուում են թէ լեռնցիները և թէ շրջապատող գիւղերի շինականները:

Աշխարհադրները սխալ են գործածում Բամբակ անունը: Նա մեր երկրում լատինի փամբակն է: Թարգմանիչը նորնպէս թողել է Բամբակ ձևը (երես 20):

Ջանգեապուր անունի տեղ թարգմանիչը գործ է ածում Ջանգաղու, որ իսկապէս չի համապատասխանում բնիկների արտասանութեան և չէ ընդունւած նորն իսկ պաշտօնապէս: Ջ ու ը վերջաւորութիւններով աշխարհագրական անուններ չտտ ունենք մեր երկրում: Մենք կարծում ենք, որ դա ձ ո ը բառի աղճատումն է:

Ռեկլիւն ասում է, որ վերջին 77—78 թւին՝ Արգահանի գաւառը, Կուրի վերին հովտում և Կարսինը, Արաքսի աւազանում, մեծ մասամբ զրկւեցին իրանց մահմեդական բնակիչներից և ի արիտուր ստացան բաղմաթիւ հայեր, որոնք գալիս էին Եփրատի վերին աւազանից և ճորտիս ակերից: Այլ վերջին տեղեկութիւնը

սխալ է, որովհետև բազմաթիւ հազ գաղթականներ չեն բնակւել այդ կողմերը:

Հայոց նոր լեզւի մասին Ռեկլին ասում է, որ նա շատ բառեր, բացատրութիւններ առել է թուրք և վրացի լեզուներից: Ճիշդ է, թուրքերում և վրացիներում շրջապատած տեղերում հաճախ իրանց լեզւին խառնել են այդ ազգերի լեզուներից և երբեմն շատ մեծ չափով, բայց նոր լեզուն աղղւել է գլխաւորապէս թուրքերէնից և համարեա մնացել է ազատ վրացերէնից:

Կաթողիկոսի ընտրութեան մասին տւած տեղեկութիւնները սխալ են և անկատար, ինչպէս այդ նկատում է և թարգմանիչը:

Թաւրիշի մասին Ռեկլին ասում է, որ «թուում է թէ նա եղած լինի հայկական թագաւորութեան մալրաքաղաք»: Թաւրիշի աւերակ եկեղեցու արձանագրութիւնից երևում է, որ նա կոչւում է եղել Արուճ, իսկ նորա պատմական նշանակութեան մասին, իբրեւ մալրաքաղաքի, չիշատակութիւններ չը կան: Աւերակը մնացել է Բաղրատունիների ժամանակից: Ուլ գիտէ, գուցէ նա ակն հին պատմական կէտերից մէկն է, որի մասին ակնարկներ կան Փաւստոս Բիւզանդում:

Դրքուկի մէջ շատ տեղ փոխանակ թուրք, կամ թիւրք բառի գործ է սծւած թաթար բառը: Ռուսաց ТАТАРЫНЬ բառը շատ սխալ է մեր երկրի վերաբերմամբ: Ռուսները ծանօթացել էին նախ Ղաղանի և Աստրախանի թաթարների հետ և այնու-

հետեւ ասիացի մահմեդականներին սկսել են անւանել թաթար: Նոքա «տատարին» անւանում են նույն իսկ չաչաններին, չերքեզներին, լազգիներին: Մեր երկրում ապրողները թուրքեր են, ի՞նչ եղիւ ևն թաթարներ, նոքա հալւել են և կորել, ուստի կրկնել ուրիշները սխալները—բոլորովին անտեղի է:

Ալսքանով բաւականաճաճ առաջով:

Թարգմանչի լեզուն թէև ճոխ է բառերով, բայց ծանր է և տեղ-տեղ անկանոն: Թարգմանիչը սիրում է դործ ածել գրաբառ ձևեր և խրթին բառեր: Ի՞նչ հարկաւորութիւն կար գրել «Մեծ-Արարատը իւր երկճեղ գագաթը վեր է համբարձրել հիւսիս-արևմտեցում», երբ կարելի էր ասել՝ բարձրացրել: Աղի շերտերի հաստութեան մասին ինչ կարիք կալ գրաբառ «թանձրութիւն» բառը գործ ածելու: Եւ այլն:

Դրքուկին կցած է երկու ցանկ, մէկը աչն լատուկ անունների, որ պատահում են այդ գրքի մէջ ամփոփւած գլուխներում, միւսը—աչն հեղինակների, որոնց աշխատութիւնները աղբիւր են ծառայել լօղածները գրելու համար:

Դրքուկը թէև ազատ չէ տպագրական սխալներից և կէտադրական մի քանի անչարմարութիւններից, այնու ամենայնիւ բաւարար տպաւորութիւն է անում ընթերցողի վերաջ, որ սովոր է մեր գաւառներում տպած գրքերի մէջ սնթիւ սխալներ տեսնել:

Քլ.